

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դավթյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ, նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության և 39-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության պահանջները, օրենքի նախագծի 1-ին հոդվածն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ կետից հանել «մեկ անգամ՝ չորս տարի ժամկետով» բառերը:»:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-654-30.06.2009-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություն կատարելու մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական ծառայության մասին» 2001 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ-272-ՆՕ օրենքի /այսուհետ՝ օրենք/ 34-րդ հոդվածի 3-րդ կետից հանել «մեկ անգամ՝ չորս տարի ժամկետով» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱԳԾԻ**

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներին համաձայն՝ քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմի ղեկավարը նշանակվում է չորս տարի ժամկետով: Այդ ժամկետը նրա պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը /մարմինը/ կարող է երկարաձգել մեկ անգամ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի քան նրա 65 տարին լրանալը:

Քաղաքացիական ծառայության կայունության սկզբունքը օրենքով ամրագրված համապատասխան մարմինների բնականոն գործունեության պայմաններից է, եւ այն ենթադրում է քաղաքական ուժերի հարաբերակցությունից անկախ մասնագիտական գործունեություն, որը կատարվում է համապատասխան մարմիններում ՀՀ օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված խնդիրների եւ գործառնությունների իրականացման նպատակով: Քաղաքացիական ծառայության կայունությունը մեր կարծիքով, ունի պոզիտիվ նշանակություն: Այն պետք է ապահովի կառավարման ապարատի կայունությունն ու հաջորդականությունը եւ նպաստի կադրերի պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը:

Ըստ էության քաղաքացիական-ծառայողական հարաբերությունների ապահովվում է քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակված անձանց անփոխելիության երաշխիքներով: Մինչդեռ աշխատակազմի ղեկավարի պարագայում հնարավոր չէ իրականացնել քաղաքացիական ծառայողների օրենքով վերապահված իրավունքները: Փաստորեն համապատասխան մարմնի աշխատակազմի ղեկավարը լինելով քաղաքացիական ծառայող, սույն օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ կետի ուժով զրկվում է պաշտոնավարման հնարավորությունից, որի հետեւանքով խախտվում են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքներն ու հիմնարար դրույթները: Բացի այդ, համապատասխան մարմինների աշխատակազմի ղեկավարների պաշտոնավարման ժամկետների սահմանափակում կիրառելով, աղճատվել է նաեւ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրված մեկ այլ՝ քաղաքացիական ծառայողներին ներկայացվող պահանջների միասնականության եւ օրենքի առջեւ քաղաքացիական ծառայողների իրավահավասարության սկզբունքի նշանակությունը: Այս սկզբունքի համար սահմանադրական այն հիմնարար դրույթը, որին համապատասխան՝ բոլորն առանց խտրականության հավասար են օրենքի առջեւ /14.1-րդ հոդված/:

ՀՀ Սահմանադրության հիշյալ դրույթները, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը եւ դրան առնչվող իրավական ակտերը միասնական պահանջներ են ներկայացնում եւ՝ քաղաքացիական ծառայությանը, եւ՝ քաղաքացիական ծառայողներին:

Ուստի հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության հիմնարար դրույթները եւ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքները, առաջարկվում է օրենքի համապատասխան հոդվածից հանել համապատասխան մարմիններում աշխատակազմի ղեկավարների պաշտոնավարման ժամկետի սահմանափակման վերաբերյալ նորմը:

Օրինագծի մշակմանը մասնակցել են իմ օգնականներ՝ Արմենուհի Սաղաթեյանը և  
Երվանդ Դավաթյանը